ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » դեկտեմբերի 2023թ. № **172-Ա**

ՍԱՐԳԻՍ ԳՈՐԻՍԻ ԱՐՂԱՄԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սարգիս Գորիսի Արղամանյանին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Կնունյանց փողոց 19 բնակելի տուն» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0271-0250 կադաստրային ծածկագրով 0,033 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Մյասնիկյան փողոց 8 ավտոտնակ» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0271-0056 կադաստրային ծածկագրով 0,059 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ա.Մյասնիկյան փողոց, 9/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0271-0288 կադաստրային ծածկագրով 0,004589 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Սարգիս Գորիսի Արղամանյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Կնունյանց փողոց 19 բնակելի տուն» և «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ ք. Մյասնիկյան փողոց 8 ավտոտնակ» հասցեներում գտնվող՝ Սարգիս Գորիսի Արղամանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0271-0250 կադաստրային ծածկագրով 0,033 հեկտար մակերեսով և 06-006-0271-0056 կադաստրային ծածկագրով 0,059 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ա.Մյասնիկյան փողոց, 9/3 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0271-0288 կադաստրային

ծածկագրով 0,004589 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 86 167,65 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1877,7 ՀՀ դրամ):

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26
ք. Սպիտակ